

— Պերք. Ենդ. շաբաթաթերթի առելով գեկտեմբերի 1 ին Կ. Պալմում բացուել է ռուսաց մի գլուխութեան որի սկզբնաւորութեանը իսկապէս պատկանում է Կ. Պօլսի նախկին գեսպան Նելիդովին, բայց սահայն չունենալով գլուխութեան պահանջմբն համապատասխան յարմաք շինք և ոչ էլ կանոնաւոր կրթութեան աէք ռուսուցիչներ, գլուխութեան կարողանում սպասուած յաջողութեանը ունենալ: Խոկ այժմ տեղական գեսպանի շնորհիւ վերածուած է կանոնաւոր վիճակի և եւր ծրագրով համապատասխանում ռուսաց վաճառականական գլուխութեան: Պիտի աւանդուին Թուսաց լեզու, յունարէն, ֆրանսերէն և տամէներէն, գասաւանգութեան լեզուն Ռուսերէն է: Դպրոցի պահպանութեան համար տարեկան նշանակուած է 5000 ռուբլի:

* *

— Դեկտեմ. 10-ին Ս. Պետերբուրգի քաղաքային ան գահնում տեղի ունեցաւ Ռուսաց միսիոնէրական ընկերութեան ընդհանուր ժողովը նախադահութեամբ Մոսկուայի մետրոպոլիտի. ժողովին մասնակցում էին բարձրաստիճանի եկեղեցականներ և ուրիշ անդամներ: Պերք. Ենդօմ.՝ ասելով այդ ընկերութեանը բարձրել է արդէն իր գոյութեան 30-ամեակը և առաջ է ընկերութեան այդ ժամանակի ընթացքում ունեցած գործունէութեան արդիւնքը: որ հետեւալն է: Մինչեւ այժմ հեթանոսներից և մահմետականներից քրիստոնեայ են գարձել 121+207 հոդի: Ծախք եղել է 4000.000-ից աւելի: Անգամների թիւը համառում է մինչեւ 15000-ի: Ընկերութեանը յոյն է տածում սպազայում աւելի մեծամեծ յաջողութեաններ ունենալ:

* *

— Հետափային Ամերիկայի Կատառակուա—Պա քաղաքում ռուսերէն լեզուով համարակուող թերթ աղորդում է, որ անցեալ նոյնիմբերի 4-ին յիշեալ քաղաքում կատարուել է Ռուսաց եկեղեցու օժման արարողութեանը և նոյն ամսի 12-ին նոյնանման եկեղեցում հանդէս է տեղի ունեցել նաև Միկանապուտ Պա քաղաքում:

ՄԱՅՐ ԱԹԱՅԻ

Կ. Ա. ՕՇՈՒԹԻԵՆՔ. ՏՓԽԻԱՌԻՄ.

Անցեալ համարի մէջ հաղորդել ենք յունուարի 11-ին, առաւտահան Ղ Ժամին Ա. Հայրապետի ժամանումն ի Տփխիս: Նոյն օրը

Ն. Սրբութեանը այցելութեան են եկել Թիֆլիսի նահանգապետ պ. Սվեշինը և քաղաքագլուխ պ. Գ. Եւանդուլիանցը Ն. Սրբութեան ողջամբ գալուստը շնորհաւորելու: Նոյն նպատակով յուն. 12-ին այցելել է Թիֆլիսի կոմմենդանտ պ. Աւետիսիրը: Յունուարի 18-ին՝ շաբաթ օր. Ա. Հայրապետը այցելութիւն է տուել Կովկասի կառավարչապետ գեներալ առ զիւտանդ իշխան Գ. Ա. Գալիցինին նորա օգնական գեներալ լեյտ. Ֆրեզենին և նահանգապետ Սվեշինին: Ն. Ա. Օծութեան յունուարի 14-ին այցելեց Թիֆլիսի նահանգի ազնուականների պարագլուխ իշխան Մելիքովի փոխ այցելութեան եկաւ գեներելա: Ֆրեզենի Յուն. 15-ին իշխան Գալիցին:

— Յուն. 15-ին Ն. Սրբութեան անուանակոչութեան հանդէսը կատարուել է ցանկալի շըով: Հայրապետական մաղթանը է կատարուել թեմակալ Տ. Գեորգ արքեպիսկոպոսի: Անանիա եպիսկոպոսի, ներկայ վարդապետների և բազմաթիւ քահանաների մատնակցութեամբ Ա. Խշան եկեղեցում: Նոյն օրը մեծ Տօնապետի աջը Համբուրելու են ներկայացել ներսիսեան պարոցի հոգարաձութիւնը: ուստիցական խումբը, կուսանաց վանքի միարանութիւնը, Թիֆլիսի ամբողջ հոգեորականութիւնը և ուրիշ բազմաթիւ պատուաւոր անձնինք: Ի միջի այլ բարձրաստիճան մարդկանց ն. Սրբութեան այցելել է և Պարսից ընդհանուր հիւպատոսը: Ստացուած են բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ այլ և այլ քաշաբներից: Վանքի աւագ եկեղեցու բակն ու զանգակատունը շքեղութեամբ լուսաւորուած էր այն երեկոյեան:

— Յուն. 16-ին երեկոյեան Ղ Ժամին Ա. Հայրապետը ճաշի էր հրամիրուած Կովկասի կառավարչապետ իշխան Գալիցինի մօտ:

«Հավազ» պաշտօնական թերթը հետեւալն է յայնառում այդ մասին. Պալատի եկեղեցականութեամբ լուսաւորուած պարակական դաշիճում սեղան էր ձգուած 26 հոգու համար, սեղանը շատ գեղեցիկ զարդարուած էր կանաչով և ծաղիկներով: Ա. Հայրապետը բազմել էր սեղանի գլխին մի կողմը իշխան Գալիցին, իսկ միւս կողմը նորա ամուսին իշխանուհի Մարիա Ֆեոդորովնա: Ճաշին

մասնակցում էին Կառավարչապետի օդնական գեներալ լեյտենանտ Ֆրեզէ, Տփիսիսի թեմակալ Տ. Գևորգ Աբքալիսկովոս Սուրենեանց և Գանձակի փոխանորդ Անանիս և պիտիկովոս Հարմազապետն նահանգապետի պաշտօնակատար Մինչին են: Ճաշն սկսուեցաւ ժամը 7-ին. Ա. Կաթուղիկոսի օրհնելուց յետոյ: Ճաշի ժամանակ նուազում էր զինուորական երաժշառութիւնը պ. Միջների ղեկավարութեամբ: Նորին պայծառափայլութիւնն առաջարիեց Ա. Կաթուղիկոսի կենացը որից յետոյ ն. Արրութիւնը Կառավարչապետի և նորա ամենունու կենացը հետեւակ խօսքերով: Մեր Օգոստավառ Կայորը իւր հզօր ձեռքով կառավարում է, աշխարհին ամենամեծ կայորութիւնը ինչպիս մի հսկայական ծառի ամենամեծ և զեղեցիկ միւղերից մէկն էր մեր Կովկասն է, որ յանձնել է բարձրագաստի իշխան Գրիգորի Սերդէիչ հզօր ձեռքը: Նորին պայծառափայլութեան զօրութիւն և առողջութիւն ցանկանք այս երկի յաջող կառավարութեան համար: Սակայն ևս չեմ ցանկանում Ասունացոյ ձեռքով զուգած երկու հոգի բաժանել միենանցից Ա. Աւետարանի խօսքի համաձայն: զոր Աստուած զուդեաց, մարդ մի մինեւց: Ուստի և զառնում եմ յարգելի իշխանուհուն, որի զեղեցիկ սրտին այնքան մօս է, այս երկի լուսաւորութեան զործը: Նորա ջանքերը Ա. Նունեի գպրոցի բարդաւաճման մասին, ինչպիս լսել եմ, մինչեւ իսկ իւր անձնական միջոցները չի խնայում, յայսնի են ամենքին: Բարի իշխանուհին մեր երկի համար լսու, կրօնական բարյական կրթութեամբ մայրեր է պատրաստում: Այսպիսով ն. Պայծառափայլութիւն իշխան Կառավարչապետը իւր իմաստուն հոգացողութիւնը նուիրել է այս երկի յառաջադիմութեանը, իսկ իշխանուհին իւր կողմից ծննդիք քրիստոնեայ մայրեր է պատրաստում ի բարօրութիւն այս նշանակին երկի և ի ի փառս մեծին կայսրութեան Բուռից:

Ուստի առանձին պիրով մերաժամ խմում եմ նոցա կենացը և աղօթում բարձրեալին, որ նրանց երկար և արդիւնաւետ կենը շնորհեւ:

Ճաշից յետոյ ն. Արրութիւնը Կառավար-

չառեալ և միւս հիւրերը զեղին դաշիճը՝ անցան, ուր թէյ փայելեցին: Ժամը 10-ից քառորդ պակաս Ա. Հայրապետը վեհարան դարձաւ:

— Յուն. 19-ին ն. Արրութիւնը թեմակալ առաջնորդի և իսր հեաւորդների ուղեցութեամբ այցելեց ներսիսեան զպրոցը: Նոր Դարութ (№ 12) հեաւորդների խօսքերով է նկարագրում Ա. Վ. Հ. միջնադարութիւնը. Պըտրանցում $\frac{1}{4}$ ժամ առաջ արդէն հաւաքուել էին հոգարարձուները ուսուցիչները և աշակերտները: Տեսուչը հոգարարձութեան հետ ամեն ջանք գործ էր զրել շաբեկ ընդունել Վ. Ե. Համբարձութեամբ: Կայութից մինչեւ զահիճը կարմիր մահուդ էր փառած, և շարէ շար կանգնած էին բոլոր աշակերտները երբ Վ. Ե. Հ. զպրոց մասւ: Դաշիճում աշակերտական քառահայն խումբը երգեց մի երգ և ապա Վ. Ե. Համբարձութեամբ կարճ և ամփոփ խօսքերով խօսեց պարարի և իրաւունքի մասին: Դըպրոցի տեսուչը համառօտակի կարդաց ներկայ 1900—1901 ուսումնական տարրուայ նախահաշիւթը: Ժամը 12-ին Վ. Ե. Համբարձութեամբ օրհնեց զպրոցի հոգարարձութիւնը, ուսուցիչներին և աշակերտներին և թողեց զըպրոցը: Ի պատիւ նորին Վ. Ե. Համբարձութեան այդ ոյցի չորրորդ և միջնադարի դաշիճներին արհակուեցան:

* *

Յունուարի 13-ին սովորական հանգիստառութեամբ կատարուեցաւ Ա. Հայրապետի անուանակոչութեան տօնը: Ա. պատարագից յետոյ որի սրբազնագործն էր Տ. Ենթակունի Յովհաննես և պիտիկովոս, հայրապետական մաղթանք կատարուեցաւ միաբանական ուխտի ամրոջութեան և խուռան բազմութեան ներկայութեամբ: Ի պատիւ մեծ Տօնապետի հանդիսաւոր ճաշ էր նշանակուած միաբանութեան սեղանատանը. ներկայ էին ձեմարանի ուսուցչական խումբը պաշանեաներ և Վ. Հայրապետի ներկայացուցիչները: Առաջին բանախօսն էր Ախնօղի նախանձուց Տ. Արիստակէս Արքեպիսկոպոս որպէս միաբանութեան առագ անդամ և Ա. Հայրապետի ներկայացուցիչները: Առաջին բանախօսն էր Ախնօղի նախանձուց Տ. Արիստակէս Արքեպիսկոպոս որպէս միաբանութեան առագ անդամ և Ա. Հայրապետի ներկայացուցիչները: Առաջին բանախօսն էր Ախնօղի նախանձուց Տ. Արիստակէս Արքեպիսկոպոս որպէս միաբանութեան առագ անդամ և Ա. Հայրապետի ներկայացուցիչները: Առաջին բանախօսն էր Ախնօղի նախանձուց Տ. Արիստակէս Արքեպիսկոպոս որպէս միաբանութեան առագ անդամ և Ա. Հայրապետի ներկայացուցիչները:

ծագման պատմութեան մէջ խօսքը կապեց մեծին Մկրտչի անուանակցի՝ Ա. Հայրապետի անի հետ՝ առաջարկելով ն. Արքութեան կենացը երկար կեանք և նորա բարի խորհուրդների լրացմաղթելով: Ապա նոյն Արքացանի հրամանով մի երկար բանախօսութիւն արաւ ձեմարանի աստաւածաբանութեան ուսուցիչ և Տեղական հ. Յուսիկ գարդապետ Զ. Հարաբեանը: Նա ընդհանրապէս ազգերի վերածնութեան մասին խօսելով, առանձնապես կանգ առաւ գերմանական ժողովի գողովի վերածնութեան վրայ, շեշտելով, որ եթե Գերմանիան այսօր գիտնական աշխարհի համար հեղինակութիւն է, զրամով նա պարագական է եկեղեցական—հոգեօր վերածնութեան: Հ. Յուսիկը ցոյց տուեց, որ Հայ ժողովուրդը ևս ձգտում է նոյնպէս վերածնութեան, քաջ ըմբռնելով նրա բարերար յառաջադիմական նշանակութիւնը: Մասնաւորելով իւր խօսքը Մեծ Տօնամիրոջ մասին ասաց, որ Հայի վերածնութեան կարագեաներից մէկն է հանդիսացել և Վեհափառ Հայրապետը՝ իւր եռանդուն գործունելութեամբ, թէ զրականութեան մէջ իր հեղինակութիւններով և թէ եկեղեցական ասպարիզում իրրե նշանաւոր ժողովրդական, ժողովրդից սրտի հետ խօսող քարոզիչ:

Անոօդի անգամ Տ. Աշոտ փորդապետը՝ բացարարեց անձնութիւնութեան վիհանական պատմութեան մէջ՝ և բարեմաղթեց մեր միաբանութեան համար ոյդ դաղափարի աշակերտ հանդիսանալ: Ընդհանրութեան շահերը գերազան համարել անձնականից, եղել է պատմութեան լաւագոյն անձնութրութեանց սկզբունքը բայց այդ դաղափարը իւր կաստերելութեան է հասել, քրիստոնեութեան ծագմամբ: Տ. Կարապետ փորդապետ շեշտելով Ա. Հայրապետի բազմարովանդակ կեանկի այլ և այլ կողմերը՝ կանգ առաւ նորին Արքութեան իւր կեանքի մէջ ցոյց տուած խոնարհութեան այն գաղափարի վերայ, որ դէպի ժողովրդի ծառայութեան է մղել նորան: Աշմարիս մեծութիւնը րդիտում է խոնարհութեան, ուրիշն սպասաւորելու անկեզ զգացումից:

Անցեալ գեկտ. համարում Ա. Դրիգոր Եռւսաւորչի նորագիւտ կինսազրութիւնը՝ վերնազրով մի յօդուած էր ապազրուած, ապարազզարար յօդուածի տակ մոսացուած էր հեղինակի անունը Նվորմութեան տեղիք չալու համար հարկ ենք համարում յիշել, որ յօդուածազիրը Պ. Յ. Թոփչեանն է: Հեղինակի անունը նշանակուած էր միայն նոյն համարի բովանդակութեան ցանկի մէջ վերոյիշեալ յօդուածի տակ: Յունուարի տետրակում «Տովշաննես» Բ. Կարրեցի կաթուզիկոսի ազգաբանութիւնը վերնազրով յօդուածի տակ ստորագրուած է Յ. Վ. Ցէր Մովսիսեան, պէտք է լինի Յ. Վ. Վ. Մովսիսեան:

Հանգուցեալ Խորէն եպիսկոպոս Ստեփանէի կինսազրութեան մէջ՝ Յունուար եր. 27 մի սխալ է մտել, զրուած է իւր ուսումը Մովսիուայի համալարանի իրաւարանական բաժնում աւարտելուց յետոյ, պէտք է լինի լիզուազանական բաժնում և լին:

Ն. Նախիջևանից Պ. Յ. Նահապետի կիլիկեան շըջոնի հայ արձանազրութեամբ մի քանդակ է ուղարկել մեզ, որ եթէ կեղծ չէ, արժէք կարող է ունենալ: Կլէն պատրաստել ասպարուց յետոյ՝ որ Նահապետի յօդուածի հետ կոպենք Արարատում:

Ա. Յունիշեան Արարատուր մի առանձին բաժին կունենայ Մայր Աթոռի Դիւնից՝ վերնազրով, որի տակ կապազրութիւն մէկ, Ժ. Ա. Փ. Պարու պատմութեան վերաբերեալ կարեոր կոնդակներ, թղթեր և յիշատակաբաններ:

Նոյեմբեր ամսից սկսեած, ինչպես մեր ընթերցողները, նկատած կլինին, Արարատուր հրատարակուել է իւրաքանչիւր սմիս սովորականից մի տպազրական թերթով աւելի:

ՄԱՅՐ ՏԱՀԱՐԻ ԱՆՌԻՆՈՎ ԱՏԱՅՈՒԱՇ
ՆՈՒԷՐՆԵՐ,

Ա. Ասիսարադի հայ հասարակութիւնից մի հաս մեծազիր և մեծազին ընակի դորդ.
Յ. Բաղուի հայ եկեղեցիների բարեկար-

զիչ բարձրապատճեւ Տէր Արտէն վարդադեափ միջոցաւ Ս. Էջման Ականի համար վեց հատ գեղեցիկ արձաթեայ աշամակներ ի միշտակ տիկին Կատարինե, Նասիբեանցի՝ Նասիրեան—Տ. Պետրոսեան ընկերութիւնից:

Թող օրհնէ Աստուած բարեպաշտ նուի բատուներին:

Լուսաւարափես Մայր Տամարի Ս. Էջմանին՝

ԳԵՒՇՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ:



ԵՍԱՅԻ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ

Գետ նոր Էլնք ողբացել հանգուցեալ Խորէն եղիսկովոս Ատեփանէի կորուսարչ որ հեռագիրը յունուարի 8-ին գումարի մի ուրիշ բարձրաստիճան եկեղեցականի՝ Շամախութեմակալ Տ. Եսայի Արքեպիսկոպոս Աստուածատեանի մահը Հանգուցեալլ բնիկ Տրփիսեցի էր և իւր մանկական ուսումը 1850—53 թ. ստացել է Շամքորեցոց եկեղեցու դպրոցում, ասպա շարունակել և վերջացրել է Ա. Էջմիածնի Ժառանգուուրաց դպրոցում: Վանսկանութեան մէջ մտել է 1863 թ. Մայիսի 20-ին ուրար է ստացել Մամդէոս կամուղիկոսի հրամանով 1864 թ. սարկաւագական ձեռնադրութիւն՝ նոյն թուի յուլիսի 2-ին հանգուցեալ Մկրտիչ Արքեպիսկոպոս Բարսեմանցի ձեռքով: 1865 թ. կրտսեր լուսարար է Նշանակուելը և այդ պաշտօնը կատարել է մինչև 1866 թ. յունուարի միկը: Արքեպիսկան ձեռնադրութիւն ստացել է 1867 թ. Մարտի 22-ին, իսկ հետեւեալ տարին Ապրիլի 3-ին վարդապետական աստիճան է ստացել և Ապրիլի 7-ին Էջմիածնի գանձարանչ Նշանակուել: Նոյն թուին Գեղորգ Դ. կաթողիկոսի կողմից արժանացել է վարդապետական ականակուռ խաչի: 1869 թ. Մայիսի 21-ին արձակուելով գանձարանչութիւնից, 1870 թ. յունուարի 30-ին տպարանական ժողովի անդամ է Նշանակուել 1872 թ. վանական կառավարութեան անդամ, իսկ 1873 թ. մա-

յիսի 31-ին Թիֆլիսի կանոնադրիայի անդամ և գանձարանչ: Մի տարի պաշտօն վարելուց յետոյ հրաժարուել և երկրորդ անդամ 1878 թ. մայիսի 2-ին կրկին կոչուած է նոյն պաշտօնին: Սակայն նոյն թուի հոկտ. 18-ին հրաժարուելով՝ Գեղորգ Դ. կաթողիկոսի կողմից Մանչեստրի Հայոց հովիւ է Նշանակուելը: 1834 թ. նոյն պաշտօնով տեղափոխուած է Լոնդոն: Եւրոպայից վերադառնալուց յետոյ 1888 թ. Սեպտ. 15-ին Նշանակուեցաւ Ախալ ցխայի յաջորդ, նոյն ամսի 19-ին Տայրագոյն վարդապետութեան աստիճան ստանալով: Ապա 1890 թ. հոկտ. 2-ին հանգուցեալ Մակար կաթու զիկոսը ձեռնադրութեամբ եպիսկոպոսական բարձր աստիճան շնորհչեց՝ Նշանակուելով Պարսկա Հեղիսաստանի թեմի կառավարիչ: 1894 թ. յուլ. 26-ին ներկայ Արքադնադոյն Հայրապետը արքեպիսկոպոսութեան պատիւ շնորհչեց ի արքաուր հաւատարիմ գործունեութեան: Խւր ինդրանաց համեմատ 1896 թ. հրաժարուելով առաջնորդական պաշտօնից՝ Ախնողի անդամ՝ Նշանակուեցաւ 1898 թ. մայիսի 31-ին: Շամախութեամակալ է հաստատուել 1898 թ. զեկու 17-ից: Տարաբարդարար-անողոք հիւանդութիւնը չժողովեց երկար մնալ այդ պաշտօնի մէջ: զեկու վերջին Թիֆլիս եկաւ բժշկուելու, բայց յունուարի 8-ին արդին Տէրը խւր մօտ կանչեց: Յուն. 13-ին մարմինը Ս. Նշան եկեղեցին անգամիսուեցաւ, իսկ հետեւեալ օրը այնաեղից վանքի աւագ եկեղեցին որի գաւթում և ամփոփուեցաւ պատարագից և օծումից յետոյ: Յուղարկաւորութեան զլուխ էր կանգնած Ս. Առաջնորդը Տ. Տ. Տիրայր, Կուրիւն և ուրիշ վարդապետների հետ: Տիրիս ուղեւորուելուց աւագ Շամախութեամբ Կոնսիստորիայի անդամների ներկայութեամբ կազմել էր արձանադրութիւն կազմել որով 1000 ր. թաղման համար պիտի գործադրուելը, 1000 ր. տապանագարի և 2000 ր. Մայր Աթոռին պիտի մնար: Բացի այս զումարներից 6000 ր. առաջուց կասկել էր Ներկայութեան դպրոցի չքառոր աշտկերտների համար: Հանգուցեալլ մեր միտրանութեան ծանրաբարոյ և շիտակ բնաւորութեան տէր անձնաւորութիւն ներից մէկն էր. նորա կորուստն զգալի է մեզ